ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4369-Ա « 07 » սեպտեմբերի 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի N 1157-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի օգոստոսի 6-ի N 1157-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) և հիմք ընդունելով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կանոնադրության 2.1 և 2.2 կետերը.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝

1) Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկել ծանուցումներ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ Որոշմամբ օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող՝ գույքային իրավունքներ ունեցող անձանց, ինչպես նաև Որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետով Շահառու հանդիսացողներին՝ ապահովելով նաև ծանուցագրերի հրապարակումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

2) Ապահովել Որոշման հրապարակումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

3) Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում իրականացնել Որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքում գտնվող գույքերի համար նախատեսված օտարման գործառույթները:

2.«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենին՝

1) Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում ապահովել որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա գույքերի

նկարագրության արձանագրության կազմման գործընթացը և ստորագրել Որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա գույքերի նկարագրության արձանագրությունները, որոնց կազմման համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվելու է Երևան համայնքի միջոցների հաշվին,

2) Տրամադրել աջակցություն սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված օտարման գործառույթները պատշաճ կերպով ապահովելու հարցում:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ